



✓ **Կարևոր է իմանալ**, որ աղետի պատճառ մեծ մասամբ դառնում են արագ շարժվող սողանքները: Հանկարծակի սկսվող սողանքի դեպքում անհրաժեշտ է անմիջապես լքել տարածքը սողանքին ուղղահայաց ուղղությամբ, իսկ նախանշանների առկայության դեպքում անմիջապես ահազանգել 112 ծառայություն:

Հայաստանում սողանքային գոտիներ են արձանագրվել Ողջաբերդում, Նուբարաշենում, Դիլիջանում, Պտղնիում, Սիսիանում, Լոռիում, Երկաթգծի Սանահին կայարանի սահմանամերձ գոտում և այլն: Հանրապետությունում հայտնի է մոտ 3000 սողանքավտանգ վայր: Հայաստանում ամենամեծ սողանքը գրանցվել է 1840 թ. հուլիսին, երբ հայտնի Արարատյան երկրաշարժից, Արարատ լեռից պոկվել է մոտ 3 խորանարդ կիլոմետր ծավալով զանգված և անցնելով 28 կմ՝ իր ճանապարհին ոչնչացրել է Ս. Հակոբի վանքը, Արալիք քաղաքը, Երևանի սարդարի ամառային նստավայրը, մի քանի գյուղ՝ իրենց բնակիչներով, նաև պատնեշել է Սևջուր գետը:

✓ **Հիշե՛ք**, եթե նկատել եք սողանքի նախանշաններ՝ դռների և պատուհանների դժվարությամբ փակվել, ճաքեր ծեփերի վրա, հողի ուռճացում, ճանապարհներում ճաքեր, նոր ստորգետնյա ջրեր, ծառերի ու ցանկապատերի տեղաշարժ, փոսեր կամ հողից աղմուկ, ապա անմիջապես դիմե՛ք մասնագետներին:



📞 112 🌐 [rescue.mia.gov.am](https://rescue.mia.gov.am)



# ՍՈՂԱՆՔ

**ՆԳՆ փրկարար ծառայությունը հորդորում է քաղաքացիներին լինել իրազեկված և պահպանել զգոնություն:**



**Սողանքը** հողի կամ լեռնային ապարների տեղաշարժն է լանջով, սեփական ծանրության ուժի ազդեցությամբ:

Սողանքային շարժընթացներն ուղղակիորեն կախված են տեղանքի կառուցվածքից, ապարների շերտերի տեղաբաշխումից, ստորերկրյա ցնցումներից: Հիմնականում դրսևորվում է նախալեռնային և լեռնային շրջանների թեք լանջերում և գետահովիտներում: Սողանքներից տուժում են բնակելի և արդյունաբերական կառույցները, տրանսպորտային հաղորդաուղիները, էներգատարները, գյուղատնտեսությունը, հանքերը և այլն:

### **ՍՈՂԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՇԱՐԺՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԼԻՆՈՒՄ ԵՆ.**

- դանդաղ - աղետալի չեն համարվում, քանզի նրանց արագությունը կազմում է տարեկան մի քանի տասնյակ սանտիմետր,
- միջին արագության - մեկ օրում մի քանի կիլոմետր արագությամբ շարժվող սողանքներն են,
- արագ - շարժվում են ժամում մի քանի կիլոմետր արագությամբ:

### **ՍՈՂԱՆՔԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻՑ ԵՆ՝**

- երկրաշարժի և ուժեղ պայթյունների հարուցած ցնցումները,
- անտառային զանգվածների ոչնչացումը,
- ոռոգման համակարգերի չափից շատ օգտագործելը,
- առատ մթնոլորտային տեղումները,
- լեռնային ապարների միջև գտնվող հողաշերտի կարբոնատային ծագումը,
- սխալ շինարարական աշխատանքները և այլն:

### **ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Ուսումնասիրել սողանքների հնարավոր վայրերն ու սահմանները:
- Չծանրաբեռնել սողանքավտանգ լանջը շենքերով, շինություններով:
- Չիրականացնել ծառահատումներ և անտառահատումներ լանջերում:
- Այգիներում, լանջերում դարավանդներ չկառուցել, ստեղծել ջրահեռացման համակարգ և կանխել ջրի ներծծումը կավային շերտերին:
- Մաքրել սելավատարերը, կառուցել ջրահեռացման առուներ և կոյուղի:
- Լանջը չհատել սողանքավտանգ լանջի ներքին մասում:

### **Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՍՈՂԱՆՔԻ ԴԵՊՔՈՒՄ**

- Անջատե՛ք էլեկտրական սարքերը, գազատարներն ու ջրամատակարարումը, պատրաստվե՛ք տարհանման՝ ըստ պլանի:
- Գործե՛ք ըստ սողանքի տեղաշարժի արագության՝ ցածր արագության դեպքում՝ ըստ հնարավորությունների, բարձր արագության դեպքում՝ ըստ պլանի:
- Տարհանման ժամանակ վերցրե՛ք անհրաժեշտ փաստաթղթեր, թանկարժեք իրեր, տաք հագուստ, սնունդ և դեղորայք:
- Աջակցե՛ք փրկարարներին տուժածներին փլատակներից դուրս բերելու և օգնություն ցուցաբերելու գործում:

